

## ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԻԻԶՊԱՇԵԱՆ — ԿԻԼՈՒՆԿԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ — ԱՄՄԱՆ

Տարուան սկիզբը աշակերտութեան թիւըն էր 199 (65 Մանկապարտէզ եւ 134 Նախակրթարան, 91 աղջիկ եւ 108 մանչ)։ 36 նոր աշակերտներ ունեցանք, 23 աղջիկ եւ 13 մանչ։ Քաղաքէս մեկնումի առիթով կորսնցրինք 15 աշակերտ, 7 աղջիկ եւ 8 մանչ։ Շրջանաւարտներ ունինք այս տարի 18 հոգի։

Կրթական Նախարարութեան օրինագիծը գրեթէ ամբողջութեամբ կը գործադրուի զարոցիս մէջ։ Բոլոր դասերը, բացի կըրօնքէ, հայերէն լեզուէ ու վարի պատարաններուն քիչ մը հայերէն թուարանութենէ, կը դասաւանդուին արարելէն յետոյ։ Առաջին դասարանէն սկսեալ նաեւ կը դասաւանդուի անգլերէն լեզու։ Նախարարութեան քննիչները այցելեցին զարոց, ներկայ եղան շորտ տարրեր դասարաններու, դասերուն եւ չափազանց զոհ մնացին զըզրոցին կրթական մակարդակէն։

Ուսուցչական կազմը կը բաղկանայ 13 հոգիէ՝ 9 մնայուն, 4 այցելու։ Այս տարի ունեցանք 2 նոր համալսարանական ուսուցիչներ, Օրդ. Անի Կիւլեղեան եւ Պրն. Հայկ Գարսիաշեան։ Կը փափաքեմ շնորհակալութիւնս յայտնել բոլոր ուսուցիչներուն, որոնք զոհողութեամբ ու սիրայօժար կատարեցին իրենց պաշտօնները։

Հանգէմներ.— Նախկին եկեղեցիին սրահը վերածեցինք թատերասրահի, կանոնաւոր բեմով, եւայն։ Անշուշտ պզտիկ է ու կը պակսին աթոռներ ու անհրաժեշտ դաշնակ մը։ Սակայն մեր սրահին մէջ կարելի եղաւ պատրաստել կոիկի Ամանորի հանդէս մը, որ տեղի ունեցաւ Յունուար 11ին։ Այս հանդէսին նաեւ տօնեցինք Երեւանի Հիմնարկութեան 2750ամեակը՝ մաս-

նաւոր յայտագրով։ Ապրիլ 24 ու Հ. Բ. Ը. Մ.—ի Օրը տօնեցինք մեծ շուքով զարոցէն ներս։ Եղան աշակերտական թէ ուսուցչական պոյտներ։

Դժբախտարար զարոցին նոր պատ մը դնելու յանձնարումը չկրցաւ իր ծրագրած պազարը պատրաստել, քաղաքական անկայուն կացութեան պատճառով։ Տնօրէնութիւնը այս տարի 200 տինար փոխանցեց այդ Երազրի խնայողական սնտուկին։

1968-ի ամառը չէնքի եւ կտրաւիններու նորոգութիւններ ըրինք — Մանկապարտէզի եւ Նախակրթարանի խաղաղայրերու միջեւ սանդուխներ, ճաշարանի ընդարձակում, մօշէրխու լուսցարաններու եւ սալայտակի նորոգութիւն, ժամողջ զարոցին իւղաներկ եւ կրապատում, նոր զբոսեղաններ եւ հիններուն նորոգութիւն եւ իւղաներկ։ Այս նոր, բոցութեանց համար ստացուած օժանդակութիւնը Կիւլեղեանի Հիմնարկութեանէն բալորովին անբաւարար ճշտաւ։ Այս ծախսերը հասան ծառ 900 տինարի, մինչ ստացած էինք միայն 356 տինար (1000 ստղար)։

Կիւլեղեանի Հիմնարկութեան ստացանք slide projector մը եւ ճրկու սնտուկ սլայտներ։ Նաեւ 1025 ստղար որպէս օժանդակութիւն՝ չբաւոր սաներու յատկացուելու համար։

Քաղաքէս սաներ կը պահեն զարոցին մէջ Հայ Օղնութեան Միութիւնը, Աղգային Մարզական Միութիւնը, իսկ քաղաքիս ագլայիններէն՝ Տիկին Զարուհի Փէյթէքեան, Օրդ. Շ. Փանոսեան եւ Պրն. Ե. Զօյաքեան նաեւ կը պահեն սաներ։ Տիար Վ. Ղազարեան շարունակեց Լուսիա Ղազարեան Փօշտը, որուն գումարը այս տարի յատկացուեցաւ զբաղարանի նոր զիրքերու գնման։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Մ Ո Ւ Ց Ք

1 Սեպտ. 1968-ն մինչև 31 Մայիս 1969 = 9 ամիս

|                                         |            | Տիմար       |
|-----------------------------------------|------------|-------------|
| Պատրաստ գումար - 1.9.68                 |            | 704         |
| Հ. Բ. Ը. Մ. օժանդակութիւն               | 3500 տոլար |             |
| Թորոսեան կտակ                           | 1000 տոլար |             |
|                                         | 4500 տոլար | 1,500       |
| Կիւլպէնկեան Հիմնարկութիւնէն             | 1025 տոլար | 367         |
| Զէրֆայի համար ստացուած - Հ. Բ. Ը. Մ -էն | 800 տոլար  |             |
| Կիւլպէնկեան Հաստատութիւնէն              | 250 տոլար  |             |
|                                         | 1050 տոլար | 370         |
| Մախուած գիրքերէ դոյացած                 |            | 180         |
| Ինքնաշարժի դանձումներ - 9 ամիս          |            | 660         |
| Օրացոյց, հանգէս եւ մանր նուէրներ        |            | 308         |
| Թողակներէ դոյացած                       |            |             |
| Մեղրներէ                                |            | 1,562       |
| Հ. Օ. Մ. - Ամման                        |            | 100         |
| Ա. Մ. Մ. - Ամման                        |            | 40          |
| Ամմանի բարերարներ                       |            | 85          |
| Մարաշի Հայր. - Ամերիկա                  |            | 27          |
| Լուսիս Ղազարեան ֆոնտ                    |            | 30          |
|                                         |            | <hr/> 5,933 |

Ե Լ Ք

|                                                          | Տիմար       |
|----------------------------------------------------------|-------------|
| Զէրֆայի ծաղկոցին տրուած - 9 ամիս                         | 270         |
| Դպրոցի պատին խնայողութեան հաշւոյն անցած                  | 209         |
| Ջուր, հեռաձայն, ելեքտրականութիւն                         | 100         |
| Դասագիրքերու վճարուած - առ հաշիւ                         | 102         |
| Շէնքի մանր նորոգութիւններ                                | 53          |
| Մանկապարտէզի խաղալիք, վառարան, քուրս, ճաշարան            | 96          |
| Ինքնաշարժի վճարումներ - վարիչ, 2 թաքտի, ապահովագրութիւն, |             |
| հրամանագիր, նորոգութիւն, պէնդին                          | 766         |
| Դրադարանի համար դնուած գիրքեր                            | 58          |
| Ձանապան ծախսեր - զրեւական, մեքենաներու նորոգութիւն,      |             |
| երթիւն, մաքրութիւն, հաշիւ                                | 199         |
| Բեմի շինութիւն                                           | 110         |
| Ուսուցիչներու ամսականներ վճարուած 9 ամիս                 | 2,518       |
| Ամառուայ 3 ամիսներու խախտեալ ծախսեր                      |             |
| Ուսուցիչներու ամսականներ                                 | 850         |
| Զէրֆայի ծաղկոցին - 3 ամիս                                | 100         |
| Ինքնաշարժի եւ շէնքի անհրաժեշտ նորոգութիւն                | 100         |
| Դպրոցի սրահին դաշնակ մը                                  | 150         |
| Գիրքերու ու Մանկապարտէզի պահարաններ                      | 80          |
|                                                          | <hr/> 5,752 |
| Նախատեսուած պատրաստ գումար 1969-70 սկիզբը                | 281 Տիմար   |

Վարժարանին այդ բարգաւաճ վիճակը կը պարտինք Հ. Բ. Ը. Միութեան, որ, նրկատի առնելով որ Արար-Հրեայ պատերազմի Հետեւանքով երուսաղէմի Պատրիարքարանը անկարող դարձած էր առաջուան պէս զպրոցին տարեկան բացը գոցել, բացառիկ օժանդակութիւններ ըրաւ իր պատուարժան անուներ կրող Ամմանի Իւզպաշեան Վարժարանին: Հ. Բ. Ը. Միութիւնը բացի իր տարեկան օժանդակութենէն, որ անցեալ տարի 3500 տուրք էր, այս տարի իր արաժապարկութեան տակ զտնուող Թորոսեան Կտակէն Ամմանի Վարժարանին յատկացուց յաւելեալ 1000 տուրք մը: Այսպէսով Վարժարանըս ստացաւ այս շրջանին համար 4500 տուրք, իսկ Ձէրքայի ծաղկոցը՝ 800 տուրք:

Վեց տարի անցած է այն օրէն, երբ Երուսաղէմի Պատրիարքարանը նշանակեց Վարժարանին Տնօրէնութիւնը, եւ կրնանք այսօր հպարտօրէն յայտարարել թէ Հ. Բ. Ը. Միութեան Իւզպաշեան Նախակրթարանը Ամմանի լաւագոյն վարժարաններու շարքին անցած է: Դպրոցը յարատեւ վերելքի մէջ է, ըլլա՛յ հայեցի կրթութեան անկիւնէն դիտուած, ըլլա՛յ ուսուցչական կազմին որակով, ըլլա՛յ ուսման մակարդակով: Շրջանաւարտներու տարիքը միջին հաշուով 13 է ու մեր լաւ աշակերտները օտար վարժարաններու մէջ ոչ մէկ նեղութիւն ունին միջնակարգ դասարաններու մէջ: Առանց տարի կորսնցնելու կը շարունակեն իրենց ուսումը:

Երախտագարտ ենք որ Տնօրէնութեան տարած այս վեց տարուան ճիգը զնահատուած է թէ՛ Երուսաղէմի Ամեն. Պատրիարք Ս. Հօր կողմէ եւ թէ՛ Հ. Բ. Ը. Մ. Կեդրոնական Վարչութեան անդամներուն կողմէ:

Փաստը՝ որ երբ 1963ին 1600 տուրք կը ըստանար Ամմանի Վարժարանը, այսօր 4500 տուրքի բարձրացած է Բարեգործականի օժանդակութիւնը: Դպրոցի Տնօրէնութիւնը, Ամմանահայ գաղութին կողմէ Հ. Բ. Ը. Միութեան կը յայտնէ, այս առողբով, մեր բոլորին անկեղծ երախտագիտական զգացումները:

Ձեզմէ անոնք որ ազգականներ ունին Ամերիկա, գիտեն թէ որքա՛ն ծանր են աշխատանքի պայմանները եւ թէ ի՛նչ զոհողութեանց զնով շերտմն կեանքի մը լրումով Ամերիկահայ մեր հայրենակիցներ ու մշակութային հաստատութիւններ օգնութեան կը հանին Միջին Արեւելքի Հայութեան: Ինչո՞ւ: Որպէսզի հայրենի լեզուն չմոռնի, Հայ մանուկներ հայրենի երգեն ու խօսին, ճաննան իրենց ցեղին պատմութիւնը, սիրեն իրենց եկեղեցին: Բայց ինծի համար անձնապէս ցաւ կը պատճառէ որ դեռ կան Հայ ծնողներ Ամմանի մէջ, որոնք իրենց զաւակները կը զրկեն օտար վարժարաններ: Ձեմ ուզեմ աւելի խօսիլ այս տխուր երեւոյթին մասին: Միայն արտօնեցէք որ ձեր իւրաքանչիւրին պարտականութիւն մը տամ, այս բեմէն. երբ մեկնէք այսօր այս հանդէսէն, զոհ եւ երջանիկ, խօսեցէ՛ք, համոզեցէ՛ք, օգնեցէ՛ք, բացատրեցէ՛ք որ Ամմանի մէջ կայ լաւ Հայ դպրոց մը, եւ թէ ամէն Հայ մանուկ իր ուսումը պէտք է առնէ Հ. Բ. Ը. Միութեան Ազգային Վարժարանին մէջ: Ա՛յս է մեր պարտականութիւնը, որպէս ծնողք եւ որպէս Հայ:

Տնօրէնութիւն  
ԱՆԱՀԻՑ ՈՍԿԵՐԻՉԵԱՆՆ